ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՇՈՅԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 75 - 76 (16878) ՇԱԲԱԹ 19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2020 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

COVID - 19

ՉՆԱՅԱԾ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹՎԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ, ԵՐԿՐՈՒՄ ԽԻՍՏ ԱՐԳԵԼՔՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ՉԵՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ

ՎՐԱՍՏԱՆԸ ՊԱՀՊԱՆՈՒՄ Է «ԿԱՆԱՉ ԳՈՏՈՒ» ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՍԿ ԵՐԿՐՈՒՄ «ԱՄԵՆԱԿԱՆԱՉԸ» ՍԱՄՑԽԵ-ՋԱՎԱԽԵԹԻՆ Է

Վերջին մեկ շաբաթվա ընթացքում կորոնավիրուսով վարակվածների թվի անընդհատ աճող վիճակագրությունը լուրջ մտահոգության տեղիք է տալիս, առավել եւս, որ վարակման առանձին օջախների բացահայտումը որոշակի դժվարություններ են առաջացնում: Չնայած մտահոգիչ վիճակագրության, Վրաստանը շարունակում է մնալ «Անվտանգ երկրների» ցանկում, եւ փորձագետների հավաստմամբ, երկրին շնորհված «Կանաչ գոտու» կարգավիճակին դեռեւս ոչինչ չի սպառնում: Նաեւ ավելացնենք, որ «Կանաչ գոտի» համարվող Վրաստանում «Ամենականաչը» շարունակում է մնալ Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանը, որտեղ վարակի տարածման առաջին օրերին շուրջ երկու տասնյակ դեպքերի վավերացումից հետո, կորոնավիրուսի բռնկման ոչ մի փաստ չի արձանագրվել:

Սեպտեմբերի 17-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ անցկացվեց միջգերատեսչական համակարգող խորհրդի հերթական նիստը, որտեղ քննարկվեց կորոնավիրուսով վարակման դեպքերի ավելացման կապակցությամբ ձեռնարկվելիք միջոցառումների հարցը: Նշվեց, որ առավելագույն խստությամբ պետք է հետեւել սոցիալական հեռավորության պահպանման, դիմակները կրելու, բազմամարդ հավաքներն արգելելու անհրաժեշտությունը: Միաժամանակ, նիստի օրակարգում դրվեց երկրի էկոնոմիկայի կարգավորման, մարդկանց եկամուտների աղբյուրով ապահովման, կառավարության կողմից հատկացվող սոցիալական օգնության բաշխման հետ առնչվող հարցերը:

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԿԱՐՈՂԱՑԱՎ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ «ԿԱՆԱՉ ԵՐԿՐԻ» ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ ԱՄԵՆԱԱՆՎՏԱՆԳ ԵՐԿՐՆԵՐԻ ԹՎՈՒՄ Է»

Սեպտեմբերի 16-ին Թբիլիսիի Բալթիմոր հյուրանոցում անցկացվեց ՄԱԿ-ի զբոսաշրջության Համաշխարհային կազմակերպության (UNWTO) գործադիր խորհրդի 112-րդ նիստը:

Նիստի բացմանը ներկա էին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, երկրի գործադիր եւ օրենսդիր մարմինների ներկայացուցիչներ, առողջապահության ոլորտի աշխատակիցներ: Միջոցառմանն իրենց մասնակցությունը բերեցին զբոսաշրջության Համաշխարհային կազմակերպության անդամ 24 երկրների ավելի քան 120 ներկայացուցիչներ: Նշենք, որ զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության գործադիր խորհրդի բոլոր նիստերը, մինչ այդ անցկացվում էին կազմակերպության կենտրոնակայանում, Իսպանիայի մայրաքաղաք Մադրիդում, եւ սա առաջին դեպքն է, երբ նիստն անցկացվում է այլ երկրում:

Իր խոսքում, Գիորգի Գախարիան մանրամասն խոսեց կորոնավիրուսով պայմանավորված գլոբալ համավարակի պայմաններում կառավարության

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ». ԸՆՏՐԱՀԱՄԱՐԸ՝ 41

ԱՐՉԻԼ ԹԱԼԱԿՎԱՁԵ. «ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆԸ ՎՏԱՆԳ ՉԻ ՍՊԱՌՆՈՒՄ»

Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվածեի հայտարարությամբ, չնայած կորոնավիրուսի համավարակի, 2020 թվականի ընտրությունների անցկացմանը վտանգ չի սպառնում:

Նրա խոսքով, այս տարի ընտրությունները կանցկացվեն ազատ, անվտանգ եւ ժողովրդավարական պայմաններում:

- Այս պահի դրությամբ, Վրաստանը մնում է «Կանաչ գոտու» կարգավիճակ ունեցող երկիր: Սա նշանակում է, որ իրավիճակը վերահսկվում է, եւ այսօրվա դրությամբ կարող ենք ասել, որ ընտրություններին, ինչպես նաեւ նախընտրական քարոզարշավին ոչ մի վտանգ չի սպառնում: Եթե անհրաժեշտ լինի մեր քաղաքացիների անվտանգության համար միջոցներ ձեռնարկել, կկայացվեն համապատասխան որոշումներ, սակայն ուզում եմ վստահեցնել, որ ընտրություններին ոչ մի վտանգ չի սպառնում,- հայտարարեց Արչիլ Թալակվածեն:

(Խորագրի շարունակությունը՝ 6-րդ էջում)

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-Ը ՆՈՐԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

Սեպտեմբերի 21-ին նորանկախ Հայաստանն ու համայն հայությունը նշում են Անկախության հռչակման 29-րդ տարեդարձը:

Հայաստանի Անկախության մասին հռչակագիրն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանում՝ 1990թ. օգոստոսի 23-ին: Հռչակագրով լուծարվեց Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը, եւ հռչակվեց անկախ Հայաստանի Հանրապետությունը: Հայաստանի Գերագույն խորհրդի որոշմամբ, 1991թ. սեպտեմբերի 21-ին հանրաքվե անցկացվեց ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին: Ձայնի իրավունք ունեցող քաղաքացիների 94,99 տոկոսը «կողմ» քվեարկեց անկախությանը:

Սեպտեմբերի 23-ին Գերագույն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ:

Ի տարբերություն նախորդ տարիների, այս տարի, կորոնավիրուսի համավարակի պատճառով Անկախության տոնը չի նշվի բազմամարդ հավաքներով, թեեւ Երեւանում ու Հայաստանի այլ մարզերում կանցկացվեն առանձին միջոցառումներ:

ԿՐԹԱԿԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ՄԵԿՆԱՐԿԵՑ ՆՈՐ՝ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ

ՈՒԹ ԽՈՇՈՐ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՄ ԴԱՍԵՐԸ ԱՆՑԿԱՑՎՈՒՄ ԵՆ ՀԵՌԱՎԱՐ, ԻՍԿ ՄՅՈՒՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ՝ ԴԱՍԱՍԵՆՅԱԿՆԵՐՈՒՄ

Սեպտեմբերի 15-ին Վրաստանի հանրային եւ մասնավոր դպրոցներում մեկնարկեց նոր՝ 2020-2021 ուսումնական տարին:

Վրաստանի վարչապետի ղեկավարած միջգերատեսչական խորհրդի որոշմամբ, կորոնավիրուսի տարածումը կանխարգելելու նպատակով, խոշոր քաղաքներում ու որոշ գյուղերում ուսումնական գործընթացը բոլոր դասարանների աշակերտների համար մեկնարկեց հեռավար կարգով: Ներկա դրությամբ հայտնի է, որ վերոնշյալ բնակավայրերում ուսումնական գործընթացը դասասենյակներում կանցկացվի հոկտեմբերի 1-ից: Մանկապարտեզները եւս գործունեությունը վերսկսում են հոկտեմբերի 1-ից:

Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության տեղեկատվությամբ, չնայած բարդություններին նոր ուսումնական տարին մեկնարկեց կարեւոր նորություններով:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԸ ՆՇԵՑ ԽԱՉՎԵՐԱՑԸ

Սեպտեմբերի 13-ին Վիահայոց թեմի եկեղեցիներում նշվեց Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու հինգ տաղավար տոներից վերջինը՝ Խաչվերացը: Միջոցառմանը հավատացյալների հետ միասին ներկա էին Վաստանի իշխանությունների բարձրաստիճան ներկայացուցիչներ:

Տոնի կապակցությամբ Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եւ Հավլաբարի Սուրբ էջմիածին եկեղեցիներում մատուցվեցին Սուրբ ու Աննա պատարագներ:

Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում պատարագիչը Վիրահայոց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանն էր:

Խաչվերացի պատվին մատուցած պատարագին ներկա էին Վրաստանի վարչապե-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԿԱՐՈՂԱՑԱՎ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ «ԿԱՆԱՉ ԵՐԿՐԻ» ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ ԱՄԵՆԱԱՆՎՏԱՆԳ ԵՐԿՐՆԵՐԻ ԹՎՈՒՄ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կողմից ձեռնարկած միջոցառումների, արտակարգ դրության եւ կարանտինի պայմանակարգերի հաստատման, դրանցով պայմանավորված սահմանափակումների վերաբերյալ: Վարչապետի խոսքով, այդ ամենի արդյունքում, Վրաստանը կարողացավ ձեռք բերել «Կանաչ երկրի» կարգավիճակ եւ գտնվում է միջազգային ասպարեզում ամենաանվտանգ երկրների թվում, ինչը թույլ է տալիս հետճգնաժամային ժամանակահատվածում սկսել տնտեսական զարգացման նոր փուլը:

- Հետճգնաժամային ժամանակահատվածում գլոբալ մասշտաբով էկոնոմիկայի զարգացման ուղղությամբ ամենանշանակալից իրադարձությունը զբոսաշրջության վերականգնման միտումն է, եւ մեր նպատակը այդ գործընթացում պիոներներ լինելն է: Մեր այս միտվածությունը հիմնված է զբոսաշրջության ոլորտում անվտանգության տեսանկյունից կուտակած փորձի վրա: Կարծում եմ, որ զբոսաշրջության ոլորտի համար հետճգնաժամային Վրաստանում դարաշրջանը լինելու է հնարավորությունների ժամանակահատված,- հայտարարեց վարչապետը:

Գիորգի Գախարիայի հավաստմամբ, Վրաստանի զբոսաշրջության ոլորտը ներկայիս մրցակցության մարտահրավերների տեսանկյունից առաջատարներից մեկն է եւ հավակնում է դառնալ գլոբալ զբոսաշրջության առաջատար երկրներից մեկը:

- Վրաստանը գլոբալ համավարակի դեմ պայքարում հենց սկզբից կանխագծեց երկու կարեւոր նպատակ՝ քաղաքացիների առողջությունը եւ կյանքի պաշտպանությունն ու էկոնոմիկայի հետ կապված հարցերի կարգավորումը: Կառավարության հակաճգնաժամային ծրագրում զբոսաշրջությանը վերապահվում է առաջատար դերերից մեկը,- ընդգծեց վարչապետը:

Ավելացնենք, որ «Բիլբմոր» հյուրանոցում ՄԱԿ-ի համաշխարհային զբոսաշրջության կազմակերպության գործադիր խորհրդի 112-րդ նիստի շրջանակներում, անցկացվեց զբոսաշրջության ուղղությամբ ներդրումային հարթակ:

«Նոր իրականություն-Կայուն զբոսաշրջության զարգացման դարաշրջան» խորագրով հարթակը բացեց Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնավան եւ ՄԱԿ-ի զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության գլխավոր քարտուղար, Զուրաբ Պոլոլիկաշվիլին:



ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝ ԻՍՐԱՅԵԼԻ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Սեպտեմբեր 15-ին Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն, Արաբական Միացյալ Էմիրությունների (ԱՄԷ) եւ Բահրեյնի արտգործնախարարությունների ղեկավարներ շեյխ Աբդալա բեն Զայիդ Ալ Նահայանը եւ Աբդել Լաթիֆ ազ Զայանին ստորագրեցին հարաբերությունների նորմալացման համաձայնագրեր: Արարողությունը տեղի է ունեցել Սպիտակ տանն ԱՄՆ-ի նախագահ Դոնալդ Թրամփի ներկայությամբ: Ինչպես նշվեց միջոցառմանը, ԱՄԷ-ի եւ Բահրեյնի հետ Իսրայելի հարաբերությունների նորմալացումը հաշտության ուղի կհարթի տարածաշրջանի մյուս արաբական երկրների հետ եւ կօգնի վերջ դնել արաբա-իսրայելական հակամարտությանը:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆԿՈՒՄԸ՝ 12 ՏՈԿՈՍՈՎ

2020 թվականի երկրորդ եռամսյակում Եվրամիության (ԵՄ) երկրների միագումար համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) անկումը կազմել է տարեկան հաշվարկով 12 տոկոս: Այդ մասին հայտարարեց Եվրահանձնաժողովի (ԵՀ) ղեկավար Ուրսուլա ֆոն դեր Լայենը՝ Եվրամիության իրավիճակի մասին տարեկան ելույթում:

Նրա խոսքով, ԵՄ-ի 16 անդամ երկրներ գրեթե 90 միլիարդ եվրո կստանան աշխատատեղերի ապահովման համար SURE օգնության ծրագրի շրջանակում, որը Եվրահանձնաժողովն ստեղծել է կորոնավիրուսի համավարակի ժամանակ:

ԹՈՒՐՔԻԱՅԻՆ ՍՊԱՌՆՈՒՄ ԵՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐՈՎ

Եթե Թուրքիան Հունաստանի եւ Կիպրոսի հետ հիմնախնդրների կարգավորման հարցով բանակցություններ չսկսի, ապա Եվրամիությունը Թուրքիայի դեմ պատժամիջոցների նոր ցանկ կմշակի: Այս մասին ասված է Եվրամիության անդամ Միջերկրական ծովի ավազանի երկրների համատեղ հայտարարության մեջ: Նշենք, որ Եվրամիության այդ յոթ երկրներն իրենց աջակցությունն են հայտնել Հունաստանին եւ Կիպրոսին՝ Թուրքիայի կողմից նրանց տարածքային ամբողջականության դեմ կատարած ոտնձգությունների պատճառով: Պատժամիջոցները կլինեն ինչպես քաղաքական, այնպես էլ՝ տնտեսական բնույթի, կառնչվեն առանձին ընկերություններին:

ՀԱՐՑՈՒՄ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԵՄԻՆ ԿՐԿԻՆ ՀԱՍՏԱՏՎԵՑ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ԱՌԱՋԱՏԱՐ ԴԻՐՔԸ

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ»՝ 36 ՏՈԿՈՍ, «ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ»՝ 15 ՏՈԿՈՍ

Սեպտեմբերի 16-ին, միջազգային հանրապետական ինստիտուտը (IRI) հրապարակեց Հարցումների եւ շուկայավարման ինստիտուտի կողմից օգոստոսի 4-21-ը ընկած ժամանակահատվածում, ընդհանուր առմամբ, Վրաստանի ամբողջ տարածքում անցկացված հարցման արդյունքները: Անձնական հարցազրույցների ձեւաչափով հարցման է ենթարկվել 15 000 քաղաքացի: Հետազոտությունը ֆինանսավորվում է USAID-ի (ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն) կողմից: Միջին սխալմունքի շեմը +/- 2,5 տոկոս է:

Համաձայն միջազգային հանրապետական ինստիտուտի (IRI) կողմից անցկացրած հարցման, Վրաստանի քաղաքացիների մեկ երրորդից ավելին պատրաստ են հոկտեմբերի 31-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրություններին աջակցել իշխող «Վրացական երազանք» կուսակցությանը: Մասնավորապես, այն հարցին, որ եթե ընտրություններն անցկացվեն այս շաբաթ, ում օգտին կքվեարկեիք՝ 36 տոկոսն ասել է «Վրացական երազանքին», իսկ 15 տոկոսը՝ «Միացյալ ազգային շարժմանը»:

Մնացած քաղաքական կուսակցությունների ձայները բաշխվել են հետեւյալ կերպ. 4-ական տոկոս են ստացել «Եվրոպական Վրաստան-Ազատ ժողովրդավարներ», «Հանուն նոր Վրաստանի՝ ռազմավարություն Աղմաշենեբելին», «Վրաստանի հայրենասերների դաշինք»: «Լեյբորիստական կուսակցությանը»՝ աջակցություն է հայտնել հարցման ենթարկվածների 3 տոկոսը: Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ ընտրություններին մասնակից մյուս ընտրական սուբյեկտների աջակցությունն ընտրողների կողմից վավերացվում է մեկ-երկու տոկոսի շրջանակներում:

Ընտրողների 23 տոկոսը նշել է, որ չգիտի՝ ում օգտին քվեարկի կամ չի կարող պատասխանել հարցին:

Հարցման կազմակերպիչներին հետաքրքրեց նաեւ բնակչության դիրքորոշումը կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակի կապակցությամբ:

Հրապարակած տվյալների համաձայն, Վրաստանի բնակչության 64 տոկոսը համարում է, որ կորոնավիրուսի համաճարակից հետո իրենց տնտեսական իրավիճակը վատթարացել է:

Հարցին, թե՝ «Ինչպե՞ս է փոխվել ընտանիքի տնտեսական իրավիճակը կորոնավիրուսի համաճարակի ժամանակ», հարցվածների 25 տոկոսը պատասխանել է, որ «չափազանց վատացել է», իսկ 39 տոկոսը նշել է, որ «քիչ թե շատ վատացել է»:

Նույն հարցման համաձայն, Վրաստանի բնակչության կարծիքով, երկրի համար առաջին խնդիրը գործազրկությունն է: Գործազրկությունն ամենամեծ խնդիրն է համարում հարցվածների 25 տոկոսը:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԸ ՆՇԵՑ ԽԱՉՎԵՐԱՑԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

տի տարածաշրջանային զարգացման հարցերով խորհրդական, Թբիլիսիի Սամգորիի ընտրատարածքից «Վրացական երազանքի» մեծամասնական պատգամավորության թեկնածու Սոզար Սուբարին, Վրաստանի վարչապետի իրավաբանական հարցերով խորհրդական, Իսանիի ընտատարածքից «Վրացական երազանքի» մեծամասնական պատգամավորության թեկնածու Կախա Կախիշվիլին, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր, Թբիլիսիի Կրծանիսի-Մթածմինդա ընտրատարածքից մեծամասնական պատգամավորության թեկնածու Բեքա Օդիշարիան, Թբիլիսիի Իսանիի շրջանի վարչության նախագահ Կախա Լաբուչիձեն, Վրաստանի կառավարության վարչակազմի աշխատակից Կարեն Եղիազարյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Վիրահայոց թեմի առաջնորդական տեղապահի խորհրդական Արմեն Գեւորգյանը, թբիլիսահայ հասարակայնության ներկայացուցիչներ, մտավորականներ, կառույցների ղեկավարներ, բազում հավատացյալներ:

Հավարտ Սուրբ պատարագի, եկեղեցու բակում տեղի ունեցավ հյուրասիրություն:

Նույն օրը Թեմի եկեղեցիներում, հավարտ երեկոյան ժամերգության խաչի փառաբանության տոնի կատարվեց Խաչվերացի թափորի հատուկ կարգ եւ օրհնվեց օրվա խորհրդանիշ ռեհանն ու բաժանվեց ժողովրդին:

Խաչվերացի տոնը Սրբազան պատարագով եւ հանդիսավորությամբ նշվեց Ախալքալաքիի, Նինոծմինդայի, Ախալցիխեի, Մառնեուլիի, Թեթրիծղարոյի, Ծալկայի մունիցիպալիտետների հայաբնակ բնակավայրերի, Բաթումիի եկեղեցիներում եւ Ռուսթավիի հոգեւոր կենտրոնում:

Միջոցառման ավարտին մեր թղթակիցը գրանցեց պատարագին ներկա հյուրերի բարեմաղթանքները տոնի առիթով:

Կախա Կախիշվիլի.- Շնորհավորում եմ Հայ Առաքելական Ուղղափառ եկեղեցու հավատացյալներին եւ բոլոր նրանց, ովքեր այսօր նշում են Խաչվերացը: Այս տոնը հայ ժողովրդի համար նշանակալից տոներից մեկն է, քանի որ այն ընդգրկված է Հայաստանյայց եկեղեցու հին հիմնական տաղավարների թվում:

Մաղթում եմ առողջություն եւ երջանկություն: Այս օրը թող երջանկաբեր լինի ձեզանից յուրաքանչյուրի համար եւ հովանավոր ձեր ընտանիքներին:

Սոզար Սուբարի.- Այսօր Հայ Առաքելական Ուղղափառ եկեղեցին նշեց Խաչվերացը: Շնորհավորում եմ, մաղթում առողջություն եւ երջանկություն:

Բեքա Օդիշարիա.- Թանկագի՛ն բարեկամներ: Այսօր Հայ Առաքելական Ուղղափառ եկեղեցին նշեց Խաչվերացը: Այս տոնը Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու հին տաղավար տոներից մեկն է: Վրացիների հետ միասին, շնորհավորում եմ այս հնագույն ազգին եւ եկեղեցուն քրիստոնեական մեծ տոնի առիթով:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

COVID - 19

ՉՆԱՅԱԾ ՎԱՐԱԿՎԱԾՆԵՐԻ ԹՎԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ, ԵՐԿՐՈՒՄ ԽԻՍՏ ԱՐԳԵԼՔՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ ՉԵՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի հայտարարությամբ, չնայած, որ կորոնավիրուսով վարակվածների թիվը ամեն օր աճում է, երկրում խիստ սահմանափակումներ եւ արգելքներ չեն լինի: Վարչապետի խոսքով, ներկա դրությամբ կառավարության գլխավոր առաջնահերթությունը տնտեսության շտապ վերականգնումն է:

- Վերջին ժամանակահատվածում վարակվածների թվի աճ է նկատվում, սակայն իրավիճակն ամբողջությամբ վերահսկվում եւ կառավարվում է: Այժմ մեր հիմնական խնդիրը վարակի հետ համակերպվելն է: Այստեղ ուզում եմ շեշտել, որ առաջին փուլում խիստ միջոցառումները՝ արտակարգ դրությունը մեր տասնյակ քաղաքացիների կյանքերը փրկելու եւ տնտեսությանը քիչ վնաս պատճառելու համար էր, քանի որ վարակի մասին ոչինչ չգիտեինք: Այժմ վարակի հետ կապված բավականին տեղեկացված ենք, ինչը թույլ է տալիս, որ նման թվերի պայմաններում շարունակենք սովորական ապրել,- հայտարարեց Գիորգի Գախարիան եւ հավելեց, որ կառավարության քաղաքականության հիմնական բաղադրիչը նպատակային պայքարն է վարակի դեմ, սա կարող է ենթադրել լոկալ սահմանափակումներ, սակայն այնպիսի արգելքներ, որոնք սահմանվել էին առաջին փուլում, երկրում չեն կրկնվի:

Վարչապետը բնակչությանը կոչ արեց պահպանել սոցիալական հեռավորություն, հետեւել հիգիենայի կանոններին եւ կրել դիմակ՝ այս քայլերը հնարավորություն կտան ապրել վարակի հետ միասին եւ վերականգնել երկրի տնտեսությունը:

ԱՄԻՐԱՆ ԳԱՄԴՐԵԼԻՁԵ. «ՀԱՄԱՎԱՐԱԿԱՅԻՆ ՎԻՃԱԿԸ ՄՆՈՒՄ Է ԼԱՐՎԱԾ, ՍԱԿԱՅՆ ՎԱՐԱԿԻ ԱԳՐԵՍԻՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱԶԵԼ Է»

Սեպտեմբերի 16-ին, միջգերատեսչական համակագող խորհրդի նիստի ավարտից հետո, Վրաստանի հիվանդությունների վերահսկման ազգային կենտրոնի եկավար Ամիրան Գամդրելիձեն հայտարարեց, որ գլոբալ առումով համավարակային վիճակը կրկին մնում է լարված, միակ բանը, որը հանգստացնում է, այն է, որ վարակի ագրեսիվությունը նվազել է եւ գլոբալ առումով կորոնավիրուսից մահվան ցուցանիշը 7 տոկոսից նվազել է մինչեւ 3,2 տոկոս, դեպքերի մեծ մասն ընթանում է թեթեւ ախտանշաններով:

Ամիրան Գամդրելիձեի խոսքով, երկրում դեպքերի միջին ցուցանիշի համաձայն, չնայած նրան, որ վերջին մեկ շաբաթվա ընթացքում գրանցվում է կորոնավիրուսի դեպքերի աճ, երկիրը կրկին մնում է կանաչ գոտում:

Ըստ նրա, միջազգային համեմատության տեսանկյունից Վրաստանը դեռ ամենաապահով երկրներից թվում է:

- Այս ցուցանիշը պահպանելու համար անհրաժեշտ է համագործակցել եւ հետեւել բոլոր հանձնարարականներին, որոնք սահմանված են,- ասաց Ամիրան Գամդրելիձեն:

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. ՍԿՍՎԵԼ Է ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԵՐԿՐՈՐԴ ԱԼԻՔԸ

Աշխարհում COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն անցել է 30,382 միլիոնը: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 951 169 հազարը: Ապաքինվել է 22 միլիոն 063 788 մարդ:

Վիրուսով վարակվածների թվով աշխարհում առաջին տեղում է գտնվում **ԱՄՆ-ը,** որտեղ հաստատված **6 875 953** դեպք կա: Այստեղ մահացածների թիվը **202 231** է: Երկրորդ տեղում **Հնդկաստանն է**, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **5 214 677-ի**, մահացածներինը՝ **84 404-ի:**

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Բրազիլիան է**, որտեղ վարակվել է **4 457 443**, մահացել՝ **135 031** մարդ: **Ռուսաստանում** կորոնավիրուսով վարակվել է **1 091 186**, վարակի հետեւանքով մահացել՝ **19 195** մարդ:

Պերուում վարակվել է **750 098**, վարակի հետեւանքով մահացել՝ **31 146** մարդ: **Կոլումբիայում** վարակվել է **743 945**, վարակի հետեւանքով մահացել՝ **23 665** մարդ: Կոլումբիային հաջորդում են Մեքսիկան, Հարավային Աֆրիկան, Իսպանիան եւ Արգենտինան:

Հայաստանում, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **46 910**-ի, մահացածներինը՝ **926**-ի, ապաքինվածներինը՝ **42 369**-ի:

Ադրբեջանում վարակվածների թիվը կազմում է **38 777** մարդ: Վարակից մահացել է **571**, ապաքինվել՝ **36 289** մարդ:

Սեպտեմբերի 18-ի տվյալներով, **Վրաստանում** վարակվել է **3 119,** մահացել՝ **19**, ապաքինվել՝ **1 435** մարդ:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍՏԱՑԱՎ ՕԶՈՆԸ ՔԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) եւ Վրաստանի բնապահպանության ու գյուղատնտեսության նախարարության համատեղ «Վրաստանում Մոնրեալի արձանագրության իրականացման գործողության ծրագրի» շրջանակներում, ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային դեպարտամենտին փոխանցվեցին յոթ հատուկ իդենտիֆիկատորներ, որոնք կարող են նույնականացնել ինչպես օզոնը քայքայող նյութերը, այնպես էլ՝ դրանց խառնուրդները:

Ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային դեպարտամենտի նշանակալի գործառույթներից մեկը շրջակա միջավայրի անվտանգության պահանումն է: Հենց այդ պատճառով օզոնը քայքայող նյութերի մաքսատան շրջանցումով կամ գաղտնի փոխադրումը կանխելու նպատակով, երկրի սահմանների վրա հաջողությամբ իրականացվում է ռիսկերի վրա հիմնված վերահսկման հատուկ իդենտիֆիկատորների օգտագործումը: Վերոնշյալ փոքրածավալ սարքերը կտեղակայվեն «Թբիլիսի», «Փոթի» եւ «Բաթումի» ծեւակերպման տնտեսական գոտիներում, իսկ չորս ինդենտիֆիկատորները կտեղաբաշխվեն «Կարմիր կամուրջ», «Սադախլո» ավտոմոբիլային, «Ղազբեգի» եւ «Սարփի» անցակետերում:

Հատկանշական է, որ ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (UNDP) աջակցությամբ, անցկացվեցին օրենսդրական բարեփոխումներ օզոնի քայքայման, նյութերի ներկրման, արտահանման, տարանցիկության եւ օգտագործման մոնիթորինգի ու վերահսկողության ապահովման նպատակով: Գործարկվեցին սառցարանային վերահսկողության եւ համապատասխան սարքավորումների սպասարկման կենտրոնները, որոնց հանդերձավորման ու մաքսային աշխատակիցների եւ բնապահպանության տեսուչների վերապատրաստումը իրականացվեց UNDP-ի օգնությամբ: UNDP-ի աջակցությամբ եւ Վրաստանի կողմից հետեւողական քաղաքականության անցկացման արդյունքում, երկիրը զգալիորեն նվազեցրեց օզոն քայքայող նյութերի օգտագործումը:

2013-2020 թվականներին այդ նյութերի տարեկան օգտագործումը 5,21-ից նվազեց մինչեւ 2,4 տոննա, որի արդյունքում Վրաստանը, նախօրոք ծրագրված ցուցանիշից՝ տարեկան 2,97 տոննայից, ավելի քիչ նյութաքանակ է օգտագործում:

2030 թվականին Վրաստանը հնարավոր է սպառումից լրիվությամբ վերացնի օզոնը քայքայող վտանգավոր նյութերը: Բացի այդ, UNDP-ի աջակցությամբ, Վրաստանում կստեղծվի օզոնի քայքայման նյութերի մոնիթորինգի էլեկտրոնային համակարգ: Վերոնշյալ ժամանակակից իդենտիֆիկատորները մաքսային անցակետերում եւ տնտեսական ծեւակերպման գոտիներում կնպաստեն իրավախախտումների հայտնաբերման-բացահայտմանը:

Միջոցառումն անցկացվեց օզոնային շերտի պաշտպանության միջազգային օրվա շրջանակներում, որը աշխարհի 194 երկրների կողմից նշվում է սեպտեմբերի 16-ին:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ԹՄՐԱՆՅՈՒԹ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԴԵՂՈՐԱՅՔ

«Բաթումի» ծեւակերպման տնտեսական գոտում կանխվել է թմրանյութ պարունակող դեղորայքի ապօրինի պետական սահմանն անցկացնելու փաստ:

Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության «Բաթումիի նավահանգիստ» անցակետի մաքսային աշխատակիցները կասկածի հիման վրա խուզարկել են Վրաստանի քաղաքացու անվամբ գրանցված ավտոտրանսպորտային միջոցը եւ նրան պատկանող ուղեբեռը: Խուզարկության արդյունքում հայտնաբերվել է թմրանյութ պարունակող 110 հաբ դեղորայք:

Հետագա արծագանքման նպատակով, գործի նյութերը հանձնվել են Վրաստանի ներքին գործերի նախարարությանը:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-ԻՑ 29-Ը RS CAR-ԻՆ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻՆ ԿՍՊԱՍԱՐԿԻ 14 ՎԱՅՐԵՐՈՒՄ

Սեպտեմբերի 17-29-ը, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության շարժական սերվիս-կենտրոն RS CAR-ը հարկատուներին սպասարկումներ կմատուցի երկրի տարածքի 14 վայրերում, այն երկրամասերում, որտեղ տեղակայված չեն եկամուտների ծառայության սերվիս-կենտրոններ:



RS CAR միկրոավտոբուսը հագեցած է եկամուտների ծառայության սերվիս-կենտրոններում առկա տեխնիկական միջոցներին համապատասխան: Հարկատուները կարող են իրենց հարմար ժամանակահատվածում, առանց բնակավայրից դուրս գալու, ժամանակին ստանալ ցանկալի սպասարկում:

Եկամուտների ծառայության RS CAR շարժական սերվիս-կենտրոնը **սեպտեմբերի 17-ին** կգործի **Ասպինձայում**, Թամար թագուհու փողոցում, «TBC բանկի» հարակից տարածքում, **սեպտեմբերի 18-ին՝ Նինոծմինդայում**, Պուշկինի փողոցում, վարչության շենքի հարակից տարածքում, **սեպտեմբերի 22-ին՝ Թեթրիծղարոյում**, Թամար թագուհու թիվ 34-ում, վարչության հարակից տարածքում:

Նշենք, որ բոլոր վերոնշյալ վայրերում շարժական RS CAR սերվիս-կենտրոնները կգործեն ժամը 10:00-17:00-ը:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ ՄԵԿՆԱՐԿԵՑ ՆՈՐ՝

Նոր ուսումնական տարվա համար շահագործման հանձնվեց 50 հանրային դպրոց, հիմնարար վերանորոգում իրականացվեց շուրջ 800 դպրոցում:

Նախարարության տեղեկությամբ, դպրոցներն ապահովված են դասագրքերով ու առաջին դասարանցիների բուքերով, որոնք կհանձնվեն աշակերտներին:

Նոր ուսումնական տարվանից կստեղծվի նաեւ էլեկտրոնային մատյան, ինչն ավելի կդյուրացնի հեռավար ուսումնական գործընթացը:

Նշենք՝ նախորդ ուստարվա երկրորդ կիսամյակի ընթացքում Վրաստանի որդեգրած հեռավար ուսուցման համակարգը Եվրոպայում ամենալավ համակարգերի շարքում է: Կորոնավիրուսի դեմ պայքարի մասին խոսելիս՝ Վրաստանի վարչապետը բազմիցս անդրադարձել է կրթական ոլորտում արձանագրած հաջողություններին:

ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՈՒՄ ՈՒՍՏԱՐԻՆ ՄԵԿՆԱՐԿԵՑ ԴԱՍԱՍԵՆՅԱԿՆԵՐՈՒՄ

ԹԵՐԵԶԱ ՉԻՎՉՅԱՆ

Սիրելի՛ աշակերտներ, ուսուցիչներ, կրթության բնագավառի ներկայացուցիչներ...

Շնորհավորում եմ նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ:

Նոր ուսումնական տարին պարտավորեցնող է բոլորիս համար, որովհետեւ կրթության բնագավառում իրականացվող բարեփոխումների հաջողությունը կախված է յուրաքանչյուրիս հետեւողական աշխատանքից ու նվիրումից:

Չնայած համավարակով պայմանավորված որոշակի բարդությունների, Ախալքալաքիի մունիցիպալիտետի բոլոր դպրոցները պատրաստ են ուսումնական տարեսկզբին: Հաշվի են առնված եւ իրականացված Վրաստանի առողջապահության նախարարության ցուցումները: Ուսումնական տարին գրեթե բոլոր դպրոցները սկսեցին դասասենյակներում, եւ միայն Զակ, Մուրջախեթ եւ Գոկիո գյուղերի դպրոցների շենքերը մեկ ամսով կշարունակեն փակ մնալ սանհանգույցների վերանորոգման պատճառով: Եվ սակայն, դասապրոցեսը սկսված է, երեխաները այդ ընթացքում ուսումառելու են հարեւան գյուղերի դպրոցներում, նրանց տեղաշարժը կազմակերպվելու է հատուկ տրանսպորտային միջոցով: Շրջանի երկու դպրոցներում կիրառվելու է ուսուցման հիբրիդային (խառը) մեթոդը:

Ուրախությամբ պետք է արձանագրեմ, որ չնայած համավարակային իրավիճակի, շրջանի շատ դպրոցներում ընթացան ենթակառուցվածքային աշխատանքներ ինչպես տեղական ինքնակառավարման մարմինների ֆինանսավորմամբ, այնպես էլ՝ դպրոցների բյուջեներից:

Այս ուսումնական տարում շրջանում առաջին դասարան հաճախեց 584 աշակերտ: Նրանք բոլորն էլ «Իմ առաջին համակարգիչը» ծրագրի շրջանակներում ստացան համակարգիչներ: Վրաստանի կրթության, գիտության մշակույթի եւ սպորտի նախարարության ենթակառուցվածքների բաժինը բոլոր դպրոցներին տրամադրել է դիմակներ, ջերմաչափիչներ, ձեռքերի ախտահանման հեղուկներ եւ հիգիենայի այլ պարագաներ: Առաջինից վեցերորդ դասարանների աշակերտները ստացել են նոր դասագրքեր:

Կրկին շնորհավորում եմ նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ, ցանկանում եմ բազում հաջողություններ, ստեղծագործական նվաճումներ, արդյունավետ աշխատանք: Թող այս ուսումնական տարին լինի ձեռքբերումների, հաջողությունների եւ նորանոր բարձունքների հաղթահարման տարի:

ԹԵՐԵԶԱ ՉԻՎՉՅԱՆ
Ախալքալաքիի մունիցիպալիտետի հանրակրթական ռեսուրս-կենտրոնի ղեկավար

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՄ, ՄԵՐ ԱՄԵՆԱՓՈՔՐԻԿՆԵՐ, ՄԵՐ ԱՌԱՋԻՆԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐ...


ԴԱՎԻԹ ՋԵՂԳԵՆԻՉԵ

Նորից ու նորից գիտելիքի աշխարհն իր գիրկն է առնում մեծ ու փոքրի՝ կրթելու, կյանքի ուղին հարթելու ու բովանդակությամբ լցնելու համար: 2020/21 ուսումնական տարում Նինոծմինդայի մունիցիպալիտետի հանրային դպրոցներ հաճախեցին 345 առաջին դասարանցիներ: Բարեբախտաբար, մեր շրջանում եւս նրանց ուսումնական առաջին օրը սկսվեց դասասենյակներում ու մեծ ոգեւորություն առաջացրեց: Յուրաքանչյուրին փոխանցվեցին համակարգիչներ, համապատասխան դասագրքեր:

Մունիցիպալիտետի աշակերտության ընդհանուր թիվը 3914 է:

Անցած ուսումնական տարում ունեինք 260 շրջանավարտ: Նրանցից 16-ը՝ ոսկե, 11-ը արծաթե մեդալակիրներ են: Վրաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը կշարունակեն 55-ը, 20-ը՝ կուսումնառեն Վրաստանի սահմաններից դուրս:

2019-2020 ուսումնական տարում «Իմ առաջին համակարգիչը» ծրագրի շրջանակներում Նինոծմինդայի դպրոցների 44 աշակերտ արժանացավ համակարգչի:

Դե՛ ինչ, հեռավար, թե դասասենյակներում ուսումնական տարին մեկնարկած է: Նինոծմինդայի հանրակրթական ռեսուրս-կենտրոնը շնորհավորում է բոլոր մանկավարժներին ու աշակերտներին, մաղթում արդյունավետ եւ ձեռքբերումներով հարուստ տարի: Հատուկ շնորհավորանքս մեր ամենափոքրիկներին՝ առաջինդասարանցիներին, որոնց համար այս տարի կյանքի նոր փուլ է սկսվում, թող անխափան լինի նրանց առաջընթացն ու մշտապես հաջողություններով պսակվի:

ԴԱՎԻԹ ՋԵՂԳԵՆԻՉԵ
Նինոծմինդայի մունիցիպալիտետի հանրակրթական ռեսուրս-կենտրոնի ղեկավար

ԹԲԻԼԻՍԻԻ ԹԻՎ 104 ԵՎ ԹԻՎ 103 ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ ՈՒՍՈՒՄԸ ՄԵԿՆԱՐԿԵՑ ՀԵՌԱՎԱՐ

Ինչպես հայտնի է, սեպտեմբերի կեսերին երկրում կորոնավարակի դեպքերի աճը պայմանավորեց ուսումնական տարվա առկա եւ հեռավար մեկնարկը: Այս պահի դրությամբ, Վրաստանի վարչապետի գլխավորությամբ գործող միջգերատեսչական համակարգող խորհուրդը հայտարարել է, որ դպրոցներում առկա ուսուցումը կվերականգնվի հոկտեմբերի 1-ից:

Իրինա Ժամկոչյան

Սեպտեմբերի 15-ից առկա ուսուցումն ընթացավ երկրի փոքր քաղաքների եւ գյուղերի, իսկ հեռավարը՝ երկրի խոշոր քաղաքներում, այդ թվում՝ «Վանքի դպրոց» անունով հայտնի Թբիլիսիի թիվ 104 հայկական եւ Մետրոշինարարների թաղամասում գտնվող թիվ 103 վրաց-հայկական դպրոցներում: Ուսումնական նման մեկնարկի որոշումը կայացվեց սեպտեմբերի 11-ին, երբ երկու դպրոցում էլ ամեն ինչ պատրաստ էր ուսումնական տարեսկիզբը համավարակի պայմաններում մեկնարկելու համար:

Թիվ 104 հանրային դպրոցի տնօրեն Իրինա Ժամկոչյանի հավաստմամբ, դպրոցը կարողացավ հարմարվել համավարակի պայմաններում պահանջվող նոր կանոնակարգերին՝ ջերմաչափում, սոցիալական հեռավորություն, մեկուսացման սենյակ, ախտահանիչ լուծույթներ ու պարագաներ եւ այլն: Ամռան ընթացքում, վերանորոգվեցին եւ թարմացվեցին դպրոցի միջանցքներն ու դասասենյակները:

- Գոհունակությամբ հայտնեմ մեր նախորդ ուստարվա ձեռքբերումները,- մեզ հետ զրույցում ասաց Իրինա Ժամկոչյանը:- 21 շրջանավարտների շարքում 3 ոսկե մեդալակիր ունենք, 10-ը նրանցից թբիլիսյան տարբեր բուհերի ուսանող են արդեն, ընդ որում՝ 5-ը՝ անվճար: «Իմ առաջին համակարգիչը» ծրագրի շրջանակներում, Վրաստանի կրթության եւ գիտության նախարարության կողմից, դպրոցի երկու աշակերտ արժանացել է համակարգչի: Կրթօջախի ուսուցիչներ Մարետտա Շահդինարյանը, Սիլվա Սարուխանյանը, ուսմասվար Ալմարի Սիրադեղյանը եւ ես արժանացել ենք «Ավագ ուսուցչի» կոչմանը:

Նշենք նաեւ, որ թիվ 104-ում այս տարի իրենց հուսալի ուսումը սկսեցին կրթօջախի 17 առաջին դասարանցիներ:

Այդ առումով, ուրախալի է պատկերը Թբիլիսիի Մետրոշինարարների թաղամասում գտնվող թիվ 103 վրաց-հայկական դպրոցի հայկական բաժնում: 2020-2021 ուսումնական տարում դպրոցն ունի 16 առաջին դասարանցի: Ուսմասվար Հասմիկ Պապիկյանն այս թիվը կրկնակի է համարում անցյալ ուստարվա ութ աշակերտի համեմատ: Իսկ «Այբբենարան» դասագրքի, այս դեպքում հնարավոր պակասը լրացնելու հարցում՝ ակնկալում է երկրի կրթության, գիտության, մշակույթի ու սպորտի նախարարության աջակցությունը:

Հասմիկ Պապիկյան

Ինչ վերաբերում է անցյալ տարվա շրջանավարտներին, ապա 9-ից 3-ն ընդունվել է երկրի բարձրագույն ուսումնական հաստատություններ, մեկը՝ անվճար:

Դպրոցում հույս են տածում, որ գոնե հոկտեմբերի 1-ից դպրոցականները կվերադառնան իրենց դասասենյակներ, քանի որ մյուս դպրոցների նման թիվ 103-ը նույնպես կորոնավիրուսի տարածումը կանխարգելելու բոլոր անհրաժեշտ պայմաններն իրականացնելու պատրաստակամությամբ է դիմավորելու նրանց՝ չերկնչելով հնարավոր դժվարություններից:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ՍԱԲԱԹԼՈՅՈՒՄ ԱՅՍ ՏԱՐՎԱՆԻՑ ԿԳՈՐԾԻ ՆԱԵՎ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ

ՎԱՍԻԼ ՉԱՈՒՇՅԱՆ

Սաբաթլոն Կախեթիի տարածաշրջանի Դեդոփլիսծղարոյի մունիցիպալիտետի միակ հայկաբնակ գյուղն է սահմանամերձ վրաց-ադրբեջանական սահմանին: Գյուղի բնակչության մեծամասնությունը հայեր են, դպրոցը՝ (հայ-վրացական) 65 աշակերտով, որից 40 -ը՝ հայկական բաժնում:

Երեւի թե ճիշտ կլիներ ասել, որ մենք այն երջանիկներից ենք, ով ուսումնական տարին դիմավորեց դասասենյակներում: Միգուցե ո՛չ ավանդական, ո՛չ մեծաշուք ու հյուրերի ներկայությամբ, բայց կարեւորը՝ դպրոցում: Ինչ խոսք, պահպանեցինք բոլոր հանձնարարականները, որոնք կոչված են կանխելու կորոնավարակը մեր երկրում: Մանկավարժները՝ դիմակներով, երեխաները՝ սոցիալական հեռավորության պահպանմամբ ու համապատասխան ախտահանիչ լուծույթների կիրառմամբ: Համավարակով պայմանավորված կարգուկանոնին դպրոցում բոլորն իրազեկ են ու նույնիսկ ամենափոքրերը գիտակցում են իրենց պատասխանատվության չափաբաժինը:

Հայկական բաժնի առաջին դասարանում ունենք երեք առաջին դասարանցի: Նախորդ ուստարին ավարտեց ընդամենը մեկ աշակերտ եւ այժմ ծառայում է բանակում:

Սաբաթլոյի դպրոցը հիմնովին վերանորոգված է: Դասագրքերի եւ ուսման ընթացքի հետ կապված որեւէ խնդիր չունենք: Մանկավարժների թիվը տասնութ է, այստեղից վեցը՝ Ավագ ուսուցչի կարգավիճակով: Մեր երեխաները փայլուն տիրապետում են վրացերենին, ինչպես նաեւ վրացիները՝ հայերենին: Գյուղը հայ-վրացական է, եւ դա մեծապես նպաստում է երեխաների սերտ շփմանն ու լեզուների մեջ կատարելագործմանը:

Այս տարվա ուրախալի փաստն այն է, որ գյուղում այսուհետ ունենալու ենք մանկապարտեզ՝ պետության կողմից հատկացված 180 հազար լարի գումարով կահավորված: Մանկապարտեզը նախատեսված է 25-30 երեխայի համար եւ շուտով այստեղ կհաճախեն առաջին 15 փոքրիկները:

Խոսելով ուսումնական տարվա մեկնարկի մասին եւ իհարկե շնորհավորելով այս ոլորտի բոլոր մշակներին, կուզեի երախտագիտությունս հայտնել Վրաստանի իշխանություններին գյուղին հատկացվող ուշադրության համար, մասնավորապես՝ շրջկենտրոնի 30 կմ ճանապարհի ասֆալտապատման, փողոցների լուսավորության, ջրատար խողովակների անցկացման ու նաեւ գազիֆիկացման համար:

Համավարակի պայմաններում այս աշխատանքները չեն դադարել, ինչը ոգեւորել ու շատերին մոտ գյուղում մնալու ցանկություն է առաջացրել՝ կանխելով արտագաղթը:

Դե՛, ինչ, եւս մեկ անգամ շնորհավոր նոր ուսումնական տարի, նվաճումներ ու ձեռքբերումներ բոլորին:

ՎԱՍԻԼ ՉԱՈՒՇՅԱՆ

Դեդոփլիսծղարոյի մունիցիպալիտետի սակրեբուլոյի մեծամասնական պատգամավոր
գ.Սաբաթլո